Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 22-08-2023 թ. որոշմամբ
«ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆԿՈՒԲԱՏՈՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆԿՈՒԲԱՏՈՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՆՈՐ ՆՈՐՔ ՆՈՐ ՆՈՐՔ ԹԱՂԱՄԱՍ ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 21/1
1.3 Պետական գրանցման համարը		286.160.04441
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2002-01-11
1.5 ՀՎՀՀ-ն		02561224
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)11219797
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.eif-it.com
1.8 Էլեկտրոնային փոստը		info@eif.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	244	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Համաշխարհային բանկի ,,Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի,, վարկային ծրագիր	517,457,172

	Միջազգային գերմանական միություն Համագործակցություն (GIZ) թիվ 83395908 ,,Մասնավոր հատվածի զարգացում և տեխնիկական մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկաս,, ծրագիր	2,883,850
	Ֆիլիպ Մորիս Արմենիա ՍՊԸ -ի միջև առ 28 դեկտեմբերի 2020թ. Դրամաշնորհի պայմանագիր	86,400,000
	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) «Հայաստանյան Աշխատուժի Զարգացման ուղղված միջոցառումներ» ծրագիրն իրականացնելու համար կնքված համար 72011121CA00003 Համագործակցության համաձայնագիր	35,476,146
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	ԱՄՆ -ի քաղաքացի Դավիթ Միքաէլեանի կողմից կատարած նվիրաբերություն	10,701,465
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ՀՀ Կառավարության Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման պետական աջակցության 2021 թվականի ծրագիր	9,881,321	
Համաշխարհային բանկի ,,Առնտրի խթանման և որակի ենթակառուցվածքի,, վարկային ծրագիր	590,135,719	
Ֆիլիպ Մորիս Արմենիա ՍՊԸ -ի միջև առ 28 դեկտեմբերի 2020թ. Դրամաշնորհի պայմանագիր	71,750,000	

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) «Հայաստանյան Աշխատուժի Զարգացման ուղղված միջոցառումներ (Armenia Workforce Development Activity)» ծրագիրն իրականացնելու համար կնքված No. 72011121CA00003 Համագործակցության համաձայնագիր	36,912,087
Միացյալ ազգերի զարգացման ծրագրի (UNDP) ,,Կայուն զարգացման նպատակների ֆինանսավորման հարթակի համար Տեխնոլոգիայի շրջանակում ,,Ներգրավման հարթակ,, 00109278,, դրամաշնորհային ծրագիր	14,615,000
ԱՄՆ -ի քաղ-ցի Դավիթ Միքաէլեանի կողմից կատարած նվիրաբ-թյուն (ծր-ի նպատ-ն է՝ տեխնոլոգ-ն ոլ-տի անվճար դաս-ի կազ-պում ու անցկ-ում 27092020թ Ադրբեջ հանր-ն կողմից Արցախում սանձ-ված մարտ-ն գործող-ին մասնակ-ծ Շիրակի և Լոռու մարզ-ի բնակիչ-րի (նախկին զինծառ-ներ) և նշված անձ-նց ընտան-րի անդ-րի համար)	9,164,164
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 30 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ Digitally signed by MAMIKONYAN LILIT 6701720129 _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆԿՈՒԲԱՏՈՐ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

2021Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն 3

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 6

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 7

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 8

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն 9

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 10

ՀՀ, ք.Երևան 0014, Պ.Սևակ 8; Հեռ՝. (374 60) 60 70 80; info@tmaudit.am, www. tmaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամին կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2021թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, գեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

- ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Հիմնադրամի կազմի մեջ մտնող կազմակերպություններին կամ գործունեությանը վերաբերող ֆինանսական տեղեկատվության հետ կապված: Մենք պատասխանատու ենք Հիմնադրամի աուդիտի ղեկավարման, վերահսկողության և իրականացման համար: Մենք շարունակում ենք ամբողջական պատասխանատվություն կրել մեր աուդիտորական եզրակացության համար:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Ղեկավարությանը նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Թաթուլ Մովսիսյան
Գլխավոր տնօրեն

Ղուկաս Աթոյան
Առաջադրանքի ղեկավար

28 հունիսի 2022թ.,
ք.Երևան, Պ.Սևակ 8

'000 դրամ

	Ծանոթ.	*31.12.2021թ.*	*31.12.2020թ.*
Ակտիվ			
Հիմնական միջոցներ	6	886,184	657,543
Ոչ նյութական ակտիվներ	7	1,502	11,766
Հետաձգված հարկային ակտիվներ	19	3,240	2,585
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար		1,600	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**892,526**	**671,894**
Պաշարներ	8	16,031	16,451
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր		35,971	71,948
Կանխավճարներ պաշարների և ծառայությունների համար		331	5,469
Շահութահարկի գծով ընթացիկ հարկային ակտիվ	13	976	6,868
Այլ ընթացիկ հարկային ակտիվներ	13	533	310
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9	575,365	297,440
Այլ ընթացիկ ակտիվներ		480	430
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**629,687**	**398,916**
Ընդամենը ակտիվներ		**1,522,213**	**1,070,810**
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհների ոչ ընթացիկ մաս	10	591,019	452,627
Փոխառություններ		-	263
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**591,019**	**452,890**
Ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհների ընթացիկ մաս	10	200,418	172,619
Եկամուտներին վերաբերող շնորհներ	11	42,075	61,303
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	12	403,953	150,851
Այլ ընթացիկ հարկային պարտավորություններ	13	70,180	53,494
Աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների գծով պարտավորություն		16,511	12,837
Ստացված կանխավճարներ		9,666	8,876
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**742,803**	**459,980**
Ընդամենը պարտավորություններ		**1,333,823**	**912,870**
Պահուստային կապիտալ		-	2,052
Կուտակված արդյունք		188,391	155,888
Ընդամենը զուտ ակտիվներ		**188,391**	**157,940**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2022 թվականի հունիսի 28-ին և ստորագրվել են վերջինիս անունից :

Գլխավոր տնօրեն Բագրատ Ենգիբարյան

Գլխավոր հաշվապահ Լիլիթ Մամիկոնյան

'000 դրամ

	Ծանոթ.	**2021թ.**	**2020թ.**
Շնորհներից եկամուտ	14	808,625	555,615
Ծառայությունների մատուցումից հասույթ	15	737,382	557,987
Ծրագրերի գծով ծախսեր	16	(808,625)	(555,615)
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	17	(591,188)	(441,789)
Համախառն շահույթ		**146,193**	**116,197**
Վարչական ծախսեր	18	(102,741)	(98,592)
Այլ եկամուտներ		33,276	1,348
Այլ ծախսեր		(28,991)	(19,711)
Գործառնական շահույթ		**47,737**	**(758)**
Ֆինանսական եկամուտներ	19	741	1,287
Հիմնական միջոցների վաճառքից (օտարումից) եկամուտներ		750	-
Փոխարժեքային տարբերությունից (վնաս)/օգուտ		(4,029)	3,845
Շահույթ մինչև հարկումը		**45,199**	**4,374**
Շահութահարկի գծով ծախս	20	(11,181)	(2,214)
Տարվա շահույթ		**34,018**	**2,159**
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Ընդամենը համապարփակ արդյունք		**34,018**	**2,159**

'000 դրամ	*Պահուստային կապիտալ*	*Կուտակված արդյունք*	*Ընդամենը*
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**2,052**	**153,728**	**155,780**
Տարվա շահույթ	-	2,160	**2,160**
Ընդամենը տարվա համապարփակ արդյունք	-	2,160	**2,160**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**2,052**	**155,888**	**157,940**
Տարվա շահույթ	-	34,018	34,018
Ընդամենը տարվա համապարփակ արդյունք	-	**34,018**	**34,018**
Ապահանաչված դուստր ընկերության արդյունք	(2,052)	(1,515)	(3,567)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	-	**188,391**	**188,391**

'000 դրամ

	2021թ.	2020թ.
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Որպես շնորհներ ստացված դրամական միջոցներ	649,489	465,236
Ծառայությունների մատուցումից և ապրանքների մատակարարումից ստացված դրամական միջոցներ	948,440	745,364
Վճարումներ մատակարարներին	(809,073)	(794,096)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(205,507)	(214,026)
Վճարումներ բյուջե, բացառությամբ շահութահարկի	(299,904)	(315,981)
Վճարված շահութահարկ	(5,945)	(2,650)
Այլ մուտքեր	16,181	81
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	***293,681***	***(116,072)***
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	-	-
Հիմնական միջոցների ձեռքբերումների գծով վճարումներ	(11,397)	(11,343)
Ներդրման հետգնումից մուտք	15,424	-
Ավանդի հետվերադարձ	-	14,329
Տոկոսային եկամտի ստացում	741	1,312
Փոխառության հետվերադարձ	-	4,700
Ներդրումային գործունեությունից դրամական զուտ հոսքեր	***4,768***	***8,998***
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Փոխառությունների ստացում	-	263
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր	-	*263*
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**298,449**	**(106,811)**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակահատվածի սկզբի դրությամբ	297,440	400,602
Ապահանաչված դուստր ընկերության դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակահատվածի սկզբի դրությամբ	(16,762)	-
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	*(3,762)*	*3,649*
Դրամական միջոցների համարժեքները տարեվերջի դրությամբ (ծնթգ. 9)	**575,365**	**297,440**

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Նկարագիր և գործունեություն

«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը (այսուհետ՝ հիմնադրամ) հիմնադրվել է 2002թ, Համաշխարհային բանկի «Ձեռնարկությունների ինկուբատոր» ծրագրի շրջանակում և աջակցում է Հայաստանում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտում՝ ստեղծելով նպաստավոր միջավայր նորարարության զարգացման, տեխնոլոգիաների կատարելագործման և ընկերությունների ընդլայնման համար:

Հիմնադրամը ծառայում է որպես հաղորդակցման հանգույց ոլորտում գործող բոլոր կառույցների համար՝ համատեղելով և համախմբելով բոլորի ջանքերը ՏՏ/ԲՏ ոլորտում գերազանցության հասնելու համար :

Հիմնադրամը ունեցել է մեկ դուստր կազմակերպություն՝ «Բիզնես Դիվելըփմենթ Ըդվայզըրս» ՓԲԸ (100% բաժնեմաս), որը ստեղծվել է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 28.12.2006թ որոշմամբ:

«Բիզնես Դիվելըփմենթ Ըդվայզըրս» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալը ամբողջությամբ պատկանում է հիմնադրամին:

«Բիզնես Դիվելըփմենթ Ըդվայզըրս» ՓԲԸ դուստր ընկերությունը, համաձայն ընկերության միակ բաժնետիրոջ՝ Հիմնադրամի 03.03.2021թ. որոշման, լուծարվել է: Դուստր ընկերության պահուստային կապիտալի 2,052 հազ. ՀՀ դրամ գումարը, ինչպես նաև ընկերության հաշվին առկա այլ միջոցները փոխանցվել են Հիմնադրամին՝ որպես կանոնադրական կապիտալի գումարի վերադարձ 2021թ. ընթացքում:

Հիմնադրամի հիմնական գործունեությունն է բիզնեսի զարգացման և խորհրդատվական ծառայությունների մատուցումը:

Աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը, 2021թ. 67 անձ է, իսկ 2020թ.՝ 72:

Իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Բագրևանդի 21/1, Շենք՝ Ինժեներական քաղաք Պլազա, որտեղ տեղակայված է վարչական գրասենյակը:

1.2. Կորպորատիվ կառուցվածք

Հիմնադրամի բարձրագույն կառավարման մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է: Հիմնադրամի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է Հիմնադրամի տնօրենը:

1.3. ՖՀՄՍ-ներին համապատասխանությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան:

2. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

ՀՀ արժույթը ՀՀ դրամն է, որը հիմնադրամի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է:

Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրված հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագիրը

3.1. Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ հիմնական միջոցների: Սովորաբար սկզբնական արժեքը հիմնված է ակտիվի դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

3.2. Ֆինանսական հաշվետվությունների կազմը

Ֆինանսական հաշվետվություններում ներառված են՝

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին դասակարգմամբ.

բ) շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին մեկ հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Հիմնադրամը ներկայացնում է շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ օգտագործելով դրանց գործառույթի վրա հիմնված դասակարգումը.

գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար.

դ) դրամական հոսքերի մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է՝ օգտագործելով ուղղակի մեթոդը: Վճարված տոկոսները դասակարգվում են որպես ֆինանսավորման, ստացված տոկոսները ու շահաբաժինները՝ որպես ներդրումային գործունեությունից առաջացող դրամական հոսքեր: Վճարված հարկերը դասակարգվում են որպես գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքեր:

ե) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագրից և այլ բացատրական տեղեկատվությունից.

Ֆինանսական հաշվետվություններում բացահայտվում է ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր գումարների՝ նախորդ ժամանակաշրջանի (նախորդ տարի) համադրելի տեղեկատվությունը: Երբ Հիմնադրամը իր ֆինանսական հաշվետվություններում փոփոխում է հոդվածների ներկայացումը կամ դասակարգումը, ապա վերադասակարգում է համադրելի գումարները, բացի այն դեպքերից, երբ վերադասակարգումն անիրագործելի է:

3.3. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի յուրաքանչյուր (հիմնական) բաղկացուցիչ (առանձնացնելի միավոր), որի սկզբնական արժեքը հիմնական միջոցի ամբողջ արժեքում էական է, կամ ունի տնտեսական օգուտների սպառման նշանակալիորեն տարբեր մոդել, կամ ունի նշանակալիորեն տարբեր օգտակար ծառայություն, հաշվառվում է որպես առանձին միավոր:

Հիմնական միջոցի միավորի սկզբնավորման արժեքը բաշխում է բատ դրա հիմնական բաղադրիչների: Հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչները առանձնացնելուց հետո հիմնական միջոցի միավորի մնացած մասը ևս հաշվառվում է որպես հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչ (հիմնական միջոցի միավորի մնացորդային հիմնական բաղադրիչ): Որպես հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչ առանձին հաշվառվում է նաև հիմնական միջոցի միավորի անասրքությունների առկայության վերաբերյալ կանոնավոր լայնածավալ ստուգումների իրականացման ծախսումները (արժեքը), ինչպես նաև հիմնական միջոցի միավորի կանոնավոր լայնածավալ կապիտալ վերանորոգումների ծախսումները (արժեքը):

Հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչները հիմնական միջոցի միավորի կազմում հաշվառվում են առանձին:

Զարգացման նպատակով

Հիմնական միջոցի միավորը, որը կարող է ճանաչվել որպես ակտիվ, պետք է չափվի իր սկզբնական արժեքով, որը ճանաչման ամսաթվի դրությամբ անհապաղ վճարման գնի համարժեքն է: Երբ վճարումը վճարման նորմալ պայմաններով նախատեսված ժամկետից հետաձգվում է, անհապաղ վճարման գնի համարժեքի և բնդհանուր վճարումների տարբերությունը ճանաչվում է, որպես տոկոսային ծախս՝ հետաձգված ժամկետի ընթացքում, բացառությամբ եթե նշված տոկոսային ծախսումը կապիտալացվում է:

Սկզբնական արժեքի տարրերն են, մասնավորապես՝ գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում: Գործարկման և նման նախապարտադրական ծախսումները հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում: Սկզբնական արժեքը որոշելիս առևտրային զեղչերը և արտոնությունները հանվում են:

Չափումը ճանաչումից հետո

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստը:

Մաշվածություն

Հիմնական միջոցների բոլոր դասերի նկատմամբ կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը որոշելիս հաշվի են առնվում հետևյալ գործոնները.

ա) ակտիվի ենթադրվող օգտագործելիությունը,

բ) ակնկալվող ֆիզիկական մաշվածությունը,

գ) տեխնիկական հնացածությունը,

դ) հիմնական միջոցի օգտագործման իրավական կամ նման այլ սահմանափակումներ:

Հիմնադրամը հիմնական միջոցների նկատմամբ կիրառում է հետևյալ օգտակար ծառայությունները.

Վարձակալված գույքի գծով կապիտալացված ծախսումներ	20 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	5 տարի
Արտադրատնտեսական գույք, գործիքներ	5 տարի
Հաշվողական և համակարգչային տեխնիկա	3 տարի
Այլ հիմնական միջոցներ	8 տարի

Հողամասը ունի անսահմանափակ օգտակար ծառայություն, հետևաբար դրա համար մաշվածություն չի հաշվարկվում:

Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ ՖՀՄՍ 5-ի համաձայն որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու (կամ որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառվելու) և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով:

Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցի միավորին վերաբերող հետագա ծախսումներն ավելացվում են դրա հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում են), եթե այդ ծախսումները բավարարում են ճանաչման չափանիշները: Մասնավորապես, հիմնական միջոցի միավորի վրա նոր մասի ավելացման, կամ հիմնական միջոցի միավորի մի մասի պարբերաբար փոխարինման ծախսումները ավելացվում է հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում է): Հիմնական միջոցների փոխարինվող մասերը ենթակա են ապաճանաչման: Ամենօրյա սպասարկման ծախսումները չեն ավելացվում հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին (չեն կապիտալացվում):

Ապաճանաչում

Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ապաճանաչվի, երբ՝

ա) այն օտարվում է, կամ

բ) ապագա ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում դրա օգտագործումից կամ օտարումից:

3.4. Ոչ նյութական ակտիվներ

Չափումը ճանաչման պահին

Ոչ նյութական ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով:

Ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը ներառում է՝

ա) դրա գնման գինը՝ ներառյալ ներկրման տուրքերն ու գնման չփոխհատուցվող հարկերը՝ առևտրային զեղչերը և արտոնությունները հանելուց հետո,

բ) ակտիվն իր նպատակային օգտագործման վիճակին բերելու հետ կապված ցանկացած ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Հետագա չափում

Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը հաշվառվում է իր սկզբնական արժեքով (հաշվի առած հետագա ամրագրվող ծախսումները)՝ հանած ցանկացած կուտակված ամորտիզացիա և ցանկացած կուտակված արժեզրկումից կորուստ:

Ամորտիզացիա

Ամորտիզացիան պետք է հաշվարկվի այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար՝ հետևյալ օգտակար ծառայությունից ելնելով.

- Համակարգչային ծրագիր՝ 5 տարի
- Լիցենզիաներ՝ 1-10 տարի

Ոչ նյութական ակտիվի մնացորդային արժեքը գնահատվում է զրո, իսկ ամորտիզացիայի հաշվարկման կիրառվող մեթոդն է, գծային մեթոդը:

3.5. Ակտիվների արժեզրկում

Սույն պարագրաֆի դրույթները վերաբերում են հիմնական միջոցներին, ոչ նյութական ակտիվներին:

Հիմնադրամը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատում է՝ առկա է արդյոք որևէ հայտանիշ, թե որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե առկա է որևէ այդպիսի հայտանիշ, ապա Հիմնադրամը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը:

Եթե առկա է որևէ հայտանիշ, թե որի՝ ակտիվը կարող է արժեզրկված լինել, ապա փոխհատուցվող գումարը գնահատվում է առանձին ակտիվի համար: Եթե հնարավոր չէ գնահատել առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը, Հիմնադրամը որոշում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին պատկանում է տվյալ ակտիվը (ակտիվի դրամաստեղծ միավոր):

Արժեզրկումից կորստի ճանաչում

Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է, մինչև դրա փոխհատուցվող գումարը այն և միայն այն դեպքում, եթե ակտիվի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է, քան դրա հաշվեկշռային արժեքը: Այդ նվազումն իրենից ներկայացնում է արժեզրկումից կորուստ:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը հաշվառվում է վերագնահատված գումարով: Վերագնահատված ակտիվի արժեզրկումից ցանկացած կորուստ դիտվում է, որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Արժեզրկումից կորստի հակադարձում

Արժեզրկումից կորստի հակադարձմանը վերագրելի ակտիվի ավելացած հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան ամորտիզացիայի կամ մարման), եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

Ակտիվի, բացառությամբ գուդվիլի, գծով արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ երբ ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով: Վերագնահատված ակտիվի արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.6. Պաշարներ

Պաշարները ներկայացված են սկզբնական արժեքի և իրացման զուտ արժեքի նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հիմնված է «Առաջին մուտք՝ առաջին ելք» (ՃԻՃՈ) մեթոդի վրա և ներառում է պաշարների ձեռքբերման, տրանսպորտային ծախսումները, մաքսային վճարները, ինչպես նաև պաշարները ներկա վիճակի բերելու հետ կապված ծախսումները:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները:

3.7. Ֆինանսական գործիքներ

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Հիմնադրամի դեբիտորական պարտավորությունները, փոխառությունները և դրամական միջոցները ու դրանց համարժեքները հանդիսանում են ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ:

Հիմնադրամը դեբիտորական պարտքերը, փոխառությունները և դրամական միջոցները ու դրանց համարժեքները սկզբնապես ճանաչում է դրանց առաջացման օրը:

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, բան էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Մասնակցությունը փոխանցված ակտիվում, որն առաջացել կամ պահպանվել է Հիմնադրամի կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև՝ հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման պահին իրենց հետագա չափումից կախված դասակարգվում են որպես՝

- ամորտիզացվող արժեքով չափվող,
- Շահույթ կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- այլ համապարփակ եկամտի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվների սկզբնական դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվի պայմանագրային դրամական հոսքերի բնութագրից և հիմնադրամի դրանց կառավարման բիզնես մոդելից:

Հիմնադրամի ֆինանսական ակտիվները չափվում են ամորտիզացվող արժեքով:

Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամի կրեդիտորական պարտավորությունները հանդիսանում են ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունները և սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ դրանց առաջացման օրը:

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

3.8. Վարձակալություն.որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվին Հիմնադրամը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Վարձակալության մեկնարկի ամսաթիվը՝ որի դրությամբ վարձատուն հիմքում ընկած ակտիվը դարձնում է մատչելի վարձակալի օգտագործման համար:

Վարձակալության մեկնարկի ամսաթվին Հիմնադրամը չափում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնական արժեքով:

Վարձակալության մեկնարկի ամսաթվին Հիմնադրամը չափում է վարձակալության գծով պարտավորությունը՝ այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք դեռևս չեն վճարվում այդ ամսաթվին:

Վարձավճարները գնահատվում են՝ կիրառելով վարձակալի վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել: Եթե այդ դրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, վարձակալը պետք է կիրառի վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Հիմնադրամը ներկայացնում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվները՝ այլ ակտիվներից առանձին և վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորություններից առանձին:

Հիմնադրամը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների նկատմամբ կիրառում է հաշվառման պարզեցված մոտեցումներ և չի ճանաչում օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ:

Հիմնադրամը կարճաժամկետ և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների գծով վարձավճարները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչում է որպես ծախս (ծախսում) գծային հիմունքով:

3.9. Ծառայությունների մատուցումից հասույթ

Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է, երբ (կամ այնքանով, որքանով) Հիմնադրամը կատարում (բավարարում) է կատարման պարտականությունը՝ խոստացված ապրանքը կամ ծառայությունը (այսինքն՝ ակտիվը) փոխանցելով գնորդին:

Հիմնադրամի կողմից մատուցվող ծառայություններից առաջացնում է ժամանակի ընթացքում կատարվող պարտականություններ: Յուրաքանչյուր կատարման պարտականության համար Հիմնադրամը ճանաչում է ժամանակի ընթացքում հասույթ՝ չափելով այդ կատարման պարտականության ամբողջությամբ կատարման առաջընթացը (ատոիմանը):

3.10. Շնորհներ

Դոնոր կազմակերպություններից ստացված միջոցների հաշվառումն իրականացվում է ՀՀՄՍ 20 Պետական շնորհների առանցքների հիման: Շնորհները կազմակերպությունների և պետական մարմինների կողմից տեսակների փոխանցումներն են Հիմնադրամին՝ Հիմնադրամի գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի պայմաններին անցյալում կամ ապագայում համապատասխանության դիմաց: Հիմնադրամի ակտիվները ֆինանսավորվում են շնորհներով, որոնք կարող են նաև փոխանցվել ոչ դրամային ակտիվի տեսքով: Ոչ դրամային ակտիվների տեսքով ստացված վերաբերող շնորհները ներկայացվում են իրենց անվանական արժեքով:

Հիմնադրամը ճանաչում է ակտիվներին վերաբերող շնորհները՝ որպես հետաձգված եկամուտ, որը ամորտիզացվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում: Հետաձգված եկամուտը սովորաբար դասակարգվում է որպես ոչ ընթացիկ պարտավորություններ: Այն մասը, որը հաջորդ տարի պետք է ճանաչվի եկամուտ, ներկայացվում է ընթացիկ պարտավորություններում:

Հիմնադրամը ներկայացնում է եկամուտներին վերաբերող շնորհները՝ օգտագործելով համախառն մոտեցումը:

3.11. Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են համապատասխան ֆունկցիոնալ արժույթների գործարքների օրվա դրությամբ ստանդարտված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթի փոխարկումից օգուտ կամ վնասը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթի ամորտիզացված արժեքի՝ ճշգրտված ժամանակաշրջանի ընթացքում արդյունավետ տոկոսի և վճարումների գծով, և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված արտարժույթի ամորտիզացված արժեքի միջև տարբերությունն է:

Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերա-հաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Փոխարկման հետևանքով առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթ կամ վնասում՝ բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների գծով փոխարժեքային տարբերությունների, որոնք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

3.12. Ծախսահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Այլ տեղեկատվության բացակայության դեպքում Հիմնադրամը կիրառում է 18% դրույք՝ հարկվող ժամանակավոր տարբերությունների և օգտագործվող նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների նկատմամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում (դիսկոնտավորվում):

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Հիմնադրամը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում վերականգնվում է այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Եկամուտ կամ ծախս ներկայացում

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս և ներառվեն տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք, նույն կամ տարբեր ժամանակաշրջանում, ճանաչված են՝

ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ պետք է ճանաչվեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում,

բ) ուղղակիորեն սեփական կապիտալում՝ պետք է ճանաչվեն ուղղակիորեն սեփական կապիտալում:

Հիմնադրամը շահույթ կամ վնասի, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և սեփական կապիտալի հոդվածները ներկայացնում է՝ հանելով համապատասխան հարկային հետևանքները:

3.13. Իրական արժեքի չափում

Սովորաբար իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին գործարքի գինն է: Երբ ակտիվը ձեռք է բերվում կամ պարտավորությունը ստանձնվում է այդ ակտիվի կամ պարտավորության փոխանակման գործարքում, գործարքի գինն այն գինն է, որը վճարվել է ակտիվը ձեռք բերելու համար կամ ստացվել է պարտավորությունը ստանձնելու համար (մուտքի գին): Հակառակ դրան, ակտիվի կամ պարտավորության իրական արժեքն այն գինն է, որը կստացվեր ակտիվը վաճառելու կամ կվճարվի պարտավորությունը փոխանցելու համար (ելքի գին):

Գնահատման մեթոդներ

Հիմնադրամը օգտագործում է գնահատման մեթոդներ, որոնք տեղին են տվյալ հանգամանքներում և որոնց համար բավարար տվյալներ կան իրական արժեքը չափելու համար՝ առավելագույնին հասցնելով համապատասխան (տեղին) դիտելի ելակետային տվյալների օգտագործումը և նվազագույնին հասցնելով ոչ դիտելի ելակետային տվյալների օգտագործումը:

Օգտագործվող գնահատման մեթոդներն են՝ շուկայական մոտեցումը, ծախսային մոտեցումը և եկամտային մոտեցումը:

Իրական արժեքի հիերարխիա

Իրական արժեքի հիերարխիայում ամենաբարձր առաջնահերթությունը տրվում է նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկայում գնանշված (չճշգրտվող) գներին (1-ին մակարդակի տվյալներ), իսկ ամենացածրը՝ ոչ դիտելի տվյալներին (3-րդ մակարդակի տվյալներ): 2-րդ մակարդակի երկրորդային տվյալներն այն տվյալներն են, բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնորդվող գներից, որոնք ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի են ակտիվի կամ պարտավորության համար:

4. Հաշվապահական կարևոր դատողությունները և գնահատման անորոշության հիմնական աղբյուրները

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմումը ղեկավարությունից պահանջում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք նշանակալի ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա: Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները վերանայվում են:

Անընդհատության հիմունք. Ղեկավարությունը պատրաստել է սույն ֆինանսական հաշվետվությունները անընդհատության հիմունքի հիման վրա: Ղեկավարության այս դատողությունները հիմնված են Հիմնադրամի ֆինանսական վիճակի, ընթացիկ պլանների, շահութաբերության և ֆինանսական ռեսուրսների մատչելիության, ինչպես նաև Հիմնադրամի ապագա գործունեության նկատմամբ մակրոտնտեսական վերջին փոփոխությունների ազդեցության վերլուծության հիման վրա:

Օգտակար ծառայության ժամանակ. 6). Ցենքերի օգտակար ծառայությունը գնահատվել է՝ հաշվի առնելով ենթադրվող օգտագործելիությունը: Օգտակար ծառայության մեծ ժամկետը, ապագա գործունեության նկատմամբ մակրոտնտեսական փոփոխությունները, շուկայի փոփոխությունները կարող են ազդեցություն թողնել գնահատականների վրա:

5. Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Հրապարակվել են հաշվապահական հաշվառման նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք պարտադիր են 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող հաշվետու ժամանակաշրջանների համար և Հիմնադրամը կտրվից ավելի վաղ չեն ընդունվել: Նշված նոր ստանդարտների և մեկնաբանությունների ազդեցության Հիմնադրամի գնահատականը ներկայացված է ստորև՝

Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ և ոչ ընթացիկ

2020 թվականի հունվարին ՀՄՍՏՍ հրապարակել է ՀՀՄՍ 1-ի 69-ից 76 պարբերություններում կատարված փոփոխությունները՝ սահմանելով ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորությունների դասակարգման պահանջները: Կատարված փոփոխություններով պարզաբանվում է հետևյալը՝

- ինչ է նշանակում պարտավորության մարումը հետաձգելու իրավունք,
- պարտավորության հետաձգելու իրավունքը պետք է գոյություն ունենա հաշվետու ժամանակաշրջանի վերջում,
- դասակարգումը ազդեցություն չի կրում կազմակերպության կողմից հետաձգման իրավունքն իրացնելու մտադրությունից,
- եթե միայն փոխարկելի պարտատոմսերում պարունակվող ածանցյալ գործիքն ինքնին սեփական կապիտալի գործիք է, ապա այդ դեպքում միայն պարտավորության պայմանները ազդեցություն չեն ունենա դրա դասակարգման վրա:

Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և պետք է կիրառվեն հետընթաց: Հիմնադրամը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն ընթացիկ գործելակերպի վրա, և արդյոք այդ փոփոխությունների արդյունքում կպահանջվի գործող վարկային համաձայնագրերի պայմանների վերանայում:

Հիմնական միջոցներ. մուտքեր նախքան նախանշված նպատակներով օգտագործումը՝ Փոփոխություններ ՀՀՄՍ 16-ում

2020 թվականի մայիսին ՀՄՍԽ հրապարակել է Հիմնական միջոցներ. մուտքեր նախքան նախանշված նպատակներով օգտագործումը, համաձայն որի կազմակերպություններին արգելվում է հինական միջոցի ինքարժեքից նվազեցնել այդ ակտիվը իրացումից ստացվող մուտքերը, որոնք ստացվել են այդ ակտիվը համապատասխան վայր հասցնելու և դեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ կապված: Փոխարենը, կազմակերպությունն այդ ակտիվների իրացումից ստացված մուտքերը, ինչպես նաև այդ ակտիվների արտադրման հետ կապված ծախսումները ճանաչում է շահույթ կամ վնասում:

Փոփոխությունն ուժի մեջ է 2022 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և պետք է կիրառվի հետադարձ հիմնական միջոցների այն հոդվածների նկատմամբ, որոնք մատչելի են դառնում օգտագործման՝ ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի դրությամբ կամ դրանից հետո, երբ կազմակերպությունը առաջին անգամ կիրառում է այս փոփոխությունը: Չի ակնկալվում, որ փոփոխությունները կունենան էական ազդեցություն Հիմնադրամի վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում. Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործելակերպի վերաբերյալ ուղեցույց 2-ում

2021 թվականի փետրվարին ՀՄՍԽ հրապարակել է Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործելակերպի վերաբերյալ ուղեցույց 2-ում՝ «Էականության վերաբերյալ դատողություններ կիրառելու մասին», որի շրջանակներում տրամադրվում է ուղեցույց և օրինակներ՝ կազմակերպություններին օգնելու հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների նկատմամբ կիրառել էականության վերաբերյալ դատողություններ: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին տրամադրել հաշվապահական հաշվառման քաղաքականության այնպիսի բացահայտումներ, որոնք կլինեն ավելի օգտակար՝ «հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունները» կազմակերպությունների կողմից բացահայտելու պահանջը փոխարինելով «հաշվապահական հաշվառման էական քաղաքականությունները բացահայտելու» պահանջով և տրամադրելով ուղեցույց, թե ինչպես պետք է կազմակերպությունները կիրառեն էականության հասկացությունը՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների մասին որոշումներ կայացնելիս:

ՀՀՄՍ 1-ի փոփոխությունները կիրառելի են 2023 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Փոփոխությունների վաղաժամ կիրառումը թույլատրվում է: Հաշվի առնելով, որ ՖՀՄՍ Գործելակերպի վերաբերյալ ուղեցույց 2-ի փոփոխությունները տրամադրում են ոչ պարտադիր ուղեցույց կապված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվության էականության սահմանման հետ, այս փոփոխությունների ուժի մեջ մտնելու ամսաթիվը կարևոր չէ:

Հիմնադրամը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունը՝ հաստատելու, թե դրանք ինչպես կանդրադառնան Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վրա:

6. Հիմնական միջոցներ

'000 դրամ	Կապիտա-լացված ծախսում-ներ	Կառուցվածք-ներ	Համակարգ-չային տեխ-նիկա	Տրանսպորտա-յին միջոցներ	Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	Այլ հիմնական միջոցներ	Հողա-մասեր	Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցներ	Ընդա-մենը
Սկզբնական արժեք									
01 հունվար 2020թ.	**8,333**	-	**1,705,579**	**51,609**	**713,901**	-	-	-	**2,479,422**
Ձեռքբերում	-	-	539,608	-	9,178	-	-	-	**548,786**
Օտարում/Դուրսգրում	-	-	(8,789)		(6,380)	-	-	-	**(15,169)**
31 դեկտեմբեր 2020թ.	**8,333**	-	**2,236,398**	**51,609**	**716,699**	-	-	-	**3,013,039**
Ձեռքբերում	2,540	-	474,012		8,646	-	-	-	**485,198**
Օտարում/Դուրսգրում	-	-	(4,893)		(3,161)	-	-	-	**(8,054)**
31 դեկտեմբեր 2021թ.	**10,873**	-	**2,705,517**	**51,609**	**722,184**	-	-	-	**3,490,183**
Կուտակված մաշվածություն									
01 հունվար 2020թ.	**291**	-	**1,504,026**	**40,871**	**611,473**	-	-	-	**2,156,661**
Տարեկան մաշվածություն	416	-	134,439	7,160	70,340	-	-	-	**212,355**
Օտարում/Դուրսգրում	-	-	(7,882)	-	(5,638)	-	-	-	**(13520)**
31 դեկտեմբեր 2020թ.	**707**	-	**1,630,583**	**48,031**	**676,175**	-	-	-	**2,355,496**
Տարեկան մաշվածություն	467	-	227,620	3,578	24,009	-	-	-	**255,674**
171Օտարում/Դուրսգրում	-	-	(4,533)	-	(2,638)	-	-	-	**(7,171)**
31 դեկտեմբեր 2021թ.	**1,174**	-	**1,853,670**	**51,609**	**697,546**	-	-	-	**2,603,999**
Հաշվեկշռային արժեք									
31 դեկտեմբեր 2020թ.	**7,625**	-	**605,815**	**3,578**	**40,524**	-	-	-	**657,543**
31 դեկտեմբեր 2021թ.	9,699	-	**851,847**	-	**24,638**	-	-	-	**886,184**

Մաշվածություն

'000 դրամ

	Ծանոթ.	2021թ.	2020թ.
Վարչական և ընդհանուր ծախսեր		15,786	3,529
Ծրագրերի գծով ծախսումներ		239,888	208,826
		255,674	**212,355**

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ եղել են:

Այլ

Դեռևս օգտագործման մեջ գտնվող, սակայն լրիվ մաշված հիմնական միջոցների համախառն հաշվեկշռային արժեքը 31.12.2021թ-ին կազմում է 1,757,719 հազար դրամ (31.12.2020թ-ին՝ 1,765,200 հազար դրամ):

Հիմնական միջոցների ձեռք բերման պայմանագրային հանձնառություններ չկան:

7. Ոչ նյութական ակտիվներ

'000 դրամ	*Համակարգչա-յին ծրագրեր*	*Լիցենզիաներ, ապրանքանիշեր և այլ*	*Ընդամենը*
Սկզբնական արժեք			
01 հունվար 2020թ.	138,740	16,177	154,917
Ձեռքբերում	-	4,500	4,500
Օտարում/Դուրսգրում	-	-	-
31 դեկտեմբեր 2020թ.	138,740	20,677	159,417
Ձեռքբերում		4,478	4,478
Օտարում/Դուրսգրում	-	-	-
31 դեկտեմբեր 2021թ.	138,740	25,155	163,895
Կուտակված ամորտիզացիա			
01 հունվար 2020թ.	118,884	14,263	133,147
Տարեկան ամորտիզացիա	9,928	4,576	14,504
31 դեկտեմբեր 2020թ.	128,812	18,839	147,651
Տարեկան ամորտիզացիա	9,919	4,823	14,742
31 դեկտեմբեր 2021թ.	138,731	23,662	162,393
Հաշվեկշռային արժեք			
31 դեկտեմբեր 2020թ.	9,928	1,838	11,766
31 դեկտեմբեր 2021թ.	9	1,493	1,502

8. Պաշարներ

'000 դրամ

	Մնացորդ 31.12.2021թ	*Մնացորդ 31.12.2020թ*
Գրքեր	11,748	11,830
Նյութեր	3,883	4,621
Այլ պաշարներ	400	-
	16,031	**16,451**

2021թ. որպես ծախս ճանաչված պաշարների հաշվեկշռային արժեքը կազմել է 13,504 հազար դրամ (2020թ.-ին՝ 11,554 հազար դրամ):

9. Դրամական միջոցներ դրանց փոխարժեքներ

'000 դրամ	*Մնացորդ 31.12.2021թ.*	*Մնացորդ 31.12.2020թ.*
Դրամարկղ	99	222
Բանկային հաշիվներ	575,266	297,218
	575,365	**297,440**

10.Ակտիվներին վերաբերող շնորհներ

'000 դրամ	*Մնացորդ 31.12.2021թ.*	*Մնացորդ 31.12.2020թ.*
Տարեսկզբի մնացորդ	625,246	341,988
Ավելացումներ	423,523	498,522
Վերադասակարգում եկամուտներին վերաբերող շնորհներից (տես՝ ծանոթ 11)	11,337	9,188
Ճանաչված եկամուտ (տես՝ ծանոթ. 16)	(268,669)	(224,452)
Տարեվերջի մնացորդ, որից՝	**791,437**	**625,246**
Ընթացիկ մաս	**200,418**	**172,619**

11.Եկամուտներին վերաբերող շնորհներ

'000 դրամ	*Մնացորդ 31.12.2021թ.*	*Մնացորդ 31.12.2020թ.*
Տարեսկզբի մնացորդ	61,303	75,270
Ավելացումներ	650,333	480,188
Փոխանցում ակտիվներին վերաբերող շնորհներին (տես՝ ծանոթ. 11)	(11,337)	(9,188)
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը շնորհների վրա	(215)	(173)
Ճանաչված եկամուտ (տես՝ ծանոթ. 15)	(554,490)	(332,322)
Դրամաշնորհների մասով ԱԱՀ	(102,675)	(137,521)
Շնորհի վերադարձ	(844)	(14,951)
Տարեվերջի մնացորդ, որից՝	**42,075**	**61,303**

<u>Ավելացումներ</u>

'000 դրամ	**2021թ.**	**2020թ.**
Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի վարկային ծրագիր	517,457	390,872
Ֆիլիպ Մորրիս Արմենիա ՍՊԸ դրամաշնորհային ծրագրով ստացված միջոցներ	86,400	-
ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանում աշխատուժի զարգացման ծրագիր-AWDA» դրամաշնորհային ծրագրով ստացված միջոցներ	35,476	-
ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունից ստացված միջոցներ	-	89,316
ԲՏԱ նախարարություն, ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում	11,000	-

	650,333	480,188

Մնացորդային արժեք

'000 դրամ

	2021թ.	2020թ.
Համաշխարհային բանկի «Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարություն» վարկային ծրագրով ստացված միջոցներ	1,029	1,029
ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունից ստացված միջոցներ (Գյումրու և Վանաձորի ՏԿ ծրագիր)	260	1,105
Հայ-հնդկական միջազգային պայմանագրով ստացված միջոցներ	11,748	11,830
Միջազգային համագործակցության գերմանական ընկերակցություն (GIZ)	4	189
Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի վարկային ծրագիր	31,768	32,534
ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի դրամաշնորհային ծրագիր	-	14,616
Ֆիլիպ Մորրիս Արմենիա ՍՊԸ դրամաշնորհային ծրագրով ստացված միջոցներ	250	-
Ստացման ենթակա գումար դոնոր կազմակերպություններից	(2,984)	-
	42,075	**61,303**

12. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

'000 դրամ

	Մնացորդ 31.12.2021թ.	*Մնացորդ 31.12.2020թ.*
Նյութերի ձեռքբերումից կրեդիտորական պարտքեր	63,862	45,426
Ծառայությունների ձեռքբերումից կրեդիտորական պարտքեր	326,409	105,347
Այլ	13,682	72
	403,953	**150,851**

Առևտրային կրեդիտորական պարտքերը տոկոսային չեն և, որպես կանոն, մարվում են 30 օրվա ընթացքում:

13. Այլ ընթացիկ հարկային պարտավորություններ

'000 դրամ

	Մնացորդ 31.12.2021թ.		*Մնացորդ 31.12.2020թ.*	
	կանխավճար	*պարտա-վորություն*	*կանխավճար*	*պարտա-վորություն*
Շահութահարկ	333	-	127	-
ԱԱՀ	-	64,858	-	51,176
Եկամտային հարկ	-	5,322	-	2,207
Պարտադիր սոց. ապահով.	171	-	171	-
Գույքահարկ	5	-	5	111
Այլ վճարներ	24	-	-	-
	533	**70,180**	**303**	**53,494**

14. Ծնորհներից եկամուտ

'000 դրամ

	2021թ.	2020թ.
Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի վարկային ծրագիր	590,135	293,430
Ֆիլիպ Մորրիս Արմենիա ՍՊԸ դրամաշնորհային ծրագրով ստացված միջոցներ	78,382	6,632
Համաշխարհային բանկի «Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարություն» վարկային ծրագրով ստացված միջոցներ	59,657	147,149
ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանում աշխատուժի զարգացման ծրագիր- AWDA» դրամաշնորհային ծրագրով ստացված միջոցներ	36,912	-
Միացյալ Ազգերի Զարգացման Ծրագրի կողմից ստացված միջոցներ	14,616	14,134
Հայ-հնդկական միջազգային պայմանագրով ստացված միջոցներ	9,978	10,590
ԲՏԱ նախարարություն, ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում	9,881	-
ԱՄՆ ՄԶԳ «Նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի հիմնում» դրամաշնորհային ծրագրով ստացված միջոցներ	8,551	55,218
ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունից ստացված միջոցներ	325	10,790
Միջազգային համագործակցության գերմանական ընկերակցություն (GIZ)	185	13,145
ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունից ստացված միջոցներ (Գյումրու և Վանաձորի ՏԿ ծրագիր)	-	4,133
ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի ազգային ճարտարագիտական լաբորատորիայի ստեղծում» դրամաշնորհային ծրագրով ստացված միջոցներ	-	389
Այլ	3	5
	808,625	**555,615**

15. Ծառայությունների մատուցումից հասույթ

'000 դրամ

	2021թ.	2020թ.
Խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններից հասույթ (Ֆիլիպ Մորիս Արմենիայի գծով)	492,210	371,705
Խորհրդատվական այլ ծառայությունների մատուցումից հասույթ	135,320	82,670
Գործառնական վարձակալություն	76,845	62,872
Դասընթացներից հասույթ	31,233	40,272
Այլ	1,774	468
	737,382	**557,987**

16. Ծրագրերի գծով ծախսեր

'000 դրամ

	2021թ.	2020թ.
Հատուցում աշխատակիցներին, ներառյալ ՔԻՊ շրջանակներում աշխատողներին	368,293	277,924
Մաշվածություն և ամորտիզացիա	254,602	223,299
Ստացված ապրանքներ և ծառայություններ	112,191	49,980

Մրցանակներ, կրթաթոշակներ	46,213	-
Ենթադրամաշնորհներ	25,362	-
Նյութական ծախսեր	1,779	3,985
Այլ	185	427
	808,625	**555,615**

17. Մատուցված ծառայությունների ինքնարժեք

'000 դրամ

	2021թ.	2020թ.
Ֆիլիպ Մորիս Արմենիայի պայմանագրի գծով ծախսեր (տես՝ Ծանոթ. 19.1)	391,782	281,686
Հատուցում աշխատակիցներին, ներառյալ ՁԻՊ շրջանակներում աշխատողներին	117,151	140,116
Կոմունալ ծառայություններ	57,450	7,776
Դասընթացների իրականացում	8,401	3,292
Այլ	16,404	8,919
	591,188	**441,789**

Ֆիլիպ Մորիս Արմենիայի պայմանագրի գծով ծախսեր

'000 դրամ

	2021թ.	2020թ.
Հատուցում աշխատակիցներին, ներառյալ ՁԻՊ շրջանակներում աշխատողներին	125,849	154,587
Հատուցում աշխատակիցներին, ներառյալ ՁԻՊ շրջանակներում աշխատողներին	114,981	77,331
Կենսաբիմիկայի, ծրագրավորման, և սենսորային նարտարագիտության նախնական ինկուբացիոն ծրագրի նախագծում և մեկնարկ" ծրագրի ինկուբացիային առնչվող ծառայություններ	89,847	35,200
Միջոցառումներ և այլ ծախսեր	28,780	2,218
Տպագրական ծառայություններ	2,910	616
Կեցության ծախսեր	2,453	3,371
Թարգմանչական ծառայություններ	1,996	-
Հեռուստատեսային հաղորդման և տեսաֆիլմի պատրաստում	-	150
Այլ	24,966	8,213
	391,782	**281,686**

18. Վարչական ծախսեր

'000 դրամ

	2021թ.	2020թ.
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	34,639	10,932
Մաշվածություն և ամորտիզացիա	28,297	6,792
Հատուցում աշխատակիցներին, ներառյալ ՁԻՊ շրջանակներում աշխատողներին	10,194	21,995
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	7,170	32,045
Աուդիտի և խորհրդատվության ծախսեր	3,651	10,320

Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	2,364	4,103
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	1,346	3,246
Նորոգման և սպասարկման ծախսեր	200	157
Այլ	14,880	9,002
	102,741	**98,592**

19. Ֆինանսական եկամուտներ և ֆինանսական ծախսեր

Ֆինանսական եկամուտը բանկային հաշիվներում առկա գումարի նկատմամբ հաշվարկված տոկոսներն են:

20. Շահութահարկ

Շահութահարկի դրույքաչափը 2021թ. 18% է (2020թ.-ին՝ 18%):

Շահութահարկի գումարի ճանաչում

'000 դրամ

	2021թ.	2020թ.
- **շահույթ (վնասում) ճանաչված շահութահարկի գումար**, այդ թվում՝	**(11,181)**	**(2,214)**
ընթացիկ հարկի գծով	(11,836)	(3,484)
հետաձգված հարկի գծով	655	1,270
- **այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված շահութահարկի գումար**, այդ թվում՝		
հետաձգված հարկի գծով	-	-
- **ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված շահութահարկի գումար**, այդ թվում՝		
հետաձգված հարկի գծով	-	-

Հարկի գործող միջին դրույքի և հարկի կիրառվող դրույքի թվային համադրում

'000 դրամ

	2021թ.	2020թ.
Հարկի կիրառվող դրույք	18%	18%
Շահույթը մինչև հարկումը	45,199	4,374
Չնվազեցվող ծախսեր/չհարկվող եկամուտներ	16,918	7,926
Հարկվող շահույթը	62,117	12,300
Ընթացիկ հարկ	11,181	2,214
Հարկի գործող միջին դրույքը	24,7%	50,6%

Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

'000 դրամ

	Ծանոթ.	*(+) Հարկվող ժամանակավոր տարբերություն* *(-) Նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերություն*	
		2021թ.	**2020թ.**

Հիմնական միջոցներ	4	1,490	1,522
Աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների գծով պարտավորություն	14	16,510	12,828
Ընդամենը		**18,000**	**14,360**
Հարկի դրույքը		**18%**	**18%**
Հետաձգված հարկային ակտիվ		**3,240**	**2,585**

«Հիմնական միջոցներ» հոդվածում հարկվող ժամանակավոր տարբերությունը առաջացել է հիմնական միջոցի միավորի՝ վերագնահատված արժեքով ներկայացումից և ֆինանսական ու հարկային հաշվառման նպատակներով տարբեր օգտակար ծառայության ժամկետների կիրառումից:

«Աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների գծով պարտավորություն» հոդվածում ժամանակավոր տարբերությունը առաջացել է աշխատակիցների կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով:

Չկան որևէ նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերություններ, չօգտագործված հարկային վնասներ և չօգտագործված հարկային գեղչեր, որոնց համար ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չի ճանաչվել որևէ հետաձգված հարկային ակտիվ:

21. Իրական արժեք, ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակներն ու քաղաքականությունը

Իրական արժեք

Հիմնական ֆինանսական ակտիվներն են առևտրական և այլ դեբիտորական պարտքերը, տրված փոխառությունները, դրամական միջոցները, իսկ ֆինանսական պարտավորությունները՝ վարձակալության գծով պարտավորությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով և դրանց գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են հաշվեկշռային արժեքներին:

Ֆինանսական ռիսկերի կառավարման հիմունքներ

Հիմնադրամը ենթարկվում է պարտքային, իրացվելիության և շուկայական ռիսկերի: Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի կազմակերպման համար և վերահսկում է այդ ռիսկերի կառավարման գործընթացը:

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Հիմնադրամը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկողության մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Հիմնադրամը չի հեջավորում իր ենթարկվածությունը այդ ռիսկերին:

Պարտքային ռիսկ

Այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի մի կողմը իր պարտականությունների չկատարմամբ մյուս կողմի համար կառաջացնի ֆինանսական կորուստ: Հիմնադրամը ենթարկվում է պարտքային ռիսկին՝ կապված գործառնական գործունեության (հիմնականում առևտրային դեբիտորական պարտքեր) և ներդրումային գործունեության (տրված փոխառություններ) հետ:

Վաճառքների գծով պարտքային ռիսկի կառավարումն իրականացվում է հաշվապահության կողմից: Դեբիտորական պարտքերի գծով իրականացվում է կանոնավոր մոնիտորինգ: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ իրականացվում է բոլոր գնորդների համար արժեզրկման (անհավաքագրելիության) ստուգում՝ անհատական հիմունքով: Պարտքերի համար ապահովություն (գրավ) չի պահանջվում:

Առևտրական դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին իր ենթարկվածությունը սահմանափակելու համար Հիմնադրամը վճարման առավելագույն ժամկետ է սահմանել 30 օր: Դեբիտորներից ոչ մեկը չունի արտաքին պարտքային վարկանիշ: Դեբիտորների մեծամասնությունը համագործակցում է Հիմնադրամի հետ շատ երկար ժամանակ:

Պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Առևտրային դեբիտորական պարտքերի ռիսկի համակենտրոնացումը գնահատվում է ցածր:

Իրացվելիության ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ Հիմնադրամը դժվարություններ կունենա իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Հիմնադրամը իրականացնում է դրամական միջոցների դեֆիցիտի ռիսկի նկատմամբ վերահսկողություն՝ օգտագործելով շարունակական իրացվելիությունը պլանավորելու գործիքը: Հիմնադրամի նպատակն է պահպանել ֆինանսավորման շարունակականության և ճկունության միջև հավասարակշռությունը՝ բանկային օվերդրաֆտների, վարկերի և ապառիկով պաշարների գնման պայմանագրերի օգտագործման միջոցով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքները հավասար են չզեղչված պայմանագրային վճարումներին, բացառությամբ ստացված անտոկոս փոխառությունների և վարձակալության գծով պարտավորությունների:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների մարման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝ հիմնված չզեղչված պայմանագրային վճարումների վրա, ինչպես նաև հաշվեկշռային արժեքները:

'000 դրամ

31.12.2021թ.		**Պայմանագրային վճարումներ**			**Հաշվեկշռային արժեք**
	Ցպահանջ	**մինչև 1 տարի**	**1-ից 5 տարի**	**Ընդամենը**	
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	-	403,953	-	**403,953**	**403,953**
Այլ պարտավորություններ	16,511	70,180	-	**86,691**	**86,691**

'000 դրամ

31.12.2020թ.		**Պայմանագրային վճարումներ**			**Հաշվեկշռային արժեք**
	Ցպահանջ	**մինչև 1 տարի**	**1-ից 5 տարի**	**Ընդամենը**	
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	-	150,845	-	**150,845**	**150,845**
Այլ պարտավորություններ	12,837	53,500	-	**66,337**	**66,337**

Շուկայական ռիսկ

Այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է երեք տեսակի ռիսկ՝ արժութային ռիսկ, տոկոսադրույքային ռիսկ և այլ գնային ռիսկ: Շուկայական ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքները ներառում են վարկերը և փոխառությունները, գնումների գծով կրեդիտորական պարտքերը, ֆինանսական երաշխավորության պայմանագրերը, վաճառքների գծով դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները:

Արժութային ռիսկ

Այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Արտարժույթի փոխարժեքների փոփոխության ռիսկին ենթարկվում է արտարժույթով վարկերը, գնումների գծով կրեդիտորական պարտքերը: Արժույթները, որոնք հիմնականում առաջացնում են նման ռիսկ, հետևյալն են՝ ԱՄՆ դոլար, Եվրո, ՌՌ:

Հիմնադրամը հաշվետու տարում չունի արտարժույթով գնանշված ֆինանսական գործիքներ:

	USD		EUR.	
Հոդված	2021թ.	2020թ.	2021թ.	2020թ.
Ընթացիկ ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանք համարժեքներ	102,898	52,388	15,760	53
Զուտ հաշվեկշիռ	**102,898**	**52,388**	**15,760**	**53**

Որպես ավելի վերանայման փոխարժեք ընդունվում է արժութային շուկայում ձևավորված արտարժույթների միջին փոխարժեքը՝

<< դրամ	*31.12.2021թ.*	*31.12.2020թ.*
1 ԱՄՆ դոլար	480.14	522.59
1 Եվրո	542.61	641.11

Հիմնադրամի բարեգործության համաձայն՝ տարեվերջին արտարժույթով ֆինանսական պարտավորությունների և ակտիվների տարբերության զուտ մնացորդը չպետք է գերազանցի տարվա հասույթի 20%-ը:

Աղյուսակում ներկայացված է ԱՄՆ դոլարի, Եվրոյի փոխարժեքի հնարավոր փոփոխության նկատմամբ զգայունությունը՝ այլ փոփոխականների հաստատուն լինելու դեպքում: Հիմնադրամի նախքան հարկումը շահույթի վրա ազդեցությունը պայմանավորված է դրամական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքների փոփոխություններով: Այլ արժույթների փոփոխությունների նկատմամբ Հիմնադրամի ենթարկվածությունը էական չէ:

	Արտարժույթ	Փոխարժեքի փոփոխություն	Նախքան հարկումը շահույթի վրա ազդեցությունը ('000 դրամ)
2021թ.	ԱՄՆ դոլար	+5%/-5%	2,470/(2,470)
2020թ.	ԱՄՆ դոլար	+5%/-5%	1,369/(1,369)
2021թ.	Եվրո	+6%/-6%	513/(513)
2020թ.	Եվրո	+6%/-6%	2/(2)

Տոկոսադրույքային ռիսկ

Այն իսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Տոկոսադրույքի փոփոխությունները գլխավորապես ազդում են վարկերի վրա՝ փոփոխելով նրանց իրական արժեքը: Ստացված վարկերը ֆիքսված տոկոսադրույքով են: Ղեկավարությունը չունի ձևակերպված քաղաքականություն ֆիքսված կամ փոփոխական տոկոսադրույքների նկատմամբ Հիմնադրամի ենթարկվածությունը: Նոր տոկոսակիր ֆինանսական պարտավորությունների ներգրավման դեպքում ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա, որոշելու, թե որ տիպի տոկոսադրույքը ավելի բարենպաստ կլինի Հիմնադրամի համար մինչև ակնկալվող մարման ժամկետի ընթացքում:

Հիմնադրամը ունի ֆիքսված տոկոսադրույքով տոկոսակիր ֆինանսական գործիքների հետևյալ կառուցվածքը.

	Հաշվեկշռային արժեք	
'000 դրամ	31.12.2021թ.	31.12.2020թ.
Ֆինանսական ակտիվներ	611,335	369,388
Ֆինանսական պարտավորություններ	390,271	150,773
Զուտ հաշվեկշիռ	**221,064**	**218,615**

Այլ գնային ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայական գների փոփոխությունների (բացի տոկոսադրույքային ռիսկից և արժութային ռիսկից առաջացողներից) արդյունքում, անկախ այն բանից, թե այդ փոփոխությունները պայմանավորված են առանձին ֆինանսական գործիքին կամ դրա թողարկողին հատուկ գործոններով, թե շուկայում շրջանառվող բոլոր նմանատիպ ֆինանսական գործիքների վրա ազդող գործոններով:

Այլ գնային ռիսկերի ազդեցությունը էական չէ:

22.Կապակցված կողմերի բացահայտումներ

Վերահսկողություն

Հիմնադրամի վերջնական վերահսկող կողմ է հանդիսանում հոգաբարձուների խորհուրդը, որը նախագահում է պարոն Հ. Մուսայելյան (Սինոփսիս Արմենիա ՓԲԸ տնօրեն):

Առանցքային կառավարչական անձնակազմին հատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմին կարճաժամկետ հատուցումները (աշխատավարձ) 2021թ. կազմել է 45,906 հազար դրամ (2020թ.՝ 40,567 հազար դրամ): Առանքային կառավարչական անձնակազմին այլ հատուցումներ չեն եղել:

23.Պայմանականություններ

Բիզնես միջավայր

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է քաղաքական և տնտեսական փոփոխությունների փուլում: Չկան բիզնեսի և վերահսկողական այնպիսի զարգացած ենթակառուցվածքներ, ինչպիսիք կան ավելի հասուն շուկայական տնտեսություններում: Ավելին, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաների գործունեությունը և վերջիններս ոչ միշտ են ճիշտ արտացոլում ֆինանսական գործիքների արժեքը: Հետագա տնտեսական աճի հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է և տարածաշրջանային անկայունությունը: Աղքատության մակարդակը շարունակում է բարձր մնալ, ինչն ազդում է համընդհանուր գնողունակության և պահանջարկի վրա:

Ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա բիզնես միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատումը: Բիզնես միջավայրի ապագա փոփոխությունները կարող են տարբերվել Ղեկավարության գնահատումներից:

Ապահովագրություն

ՀՀ-ում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում: Ներմուծվում են զարգացած երկրներում վաղուց կիրառելի ապահովագրական գործիքներ:

Հաշվետու տարվա վերջի դրությամբ Հիմնադրամը իրականացրել է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ):

Քանի դեռ չի իրականացված ակտիվների ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Հիմնադրամի ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների վրա:

Դատական հայցեր

2021թ. դեկտեմբերի 31-ի և սույն ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթվի դրությամբ Հիմնադրամի դեմ հարուցված դատական հայցեր չկան:

Հարկերի հաշվառման անորոշություններ և պայմնականություններ

ՀՀ հարկային համակարգը, հարկային հարաբերությունները կարգավորվում է հիմնականում ՀՀ հարկային օրենսգրքով: Օրենսդրությունում փոփոխությունները, պաշտոնական պարզաբանումները կամ իրազեկումները, դատական մարմինների որոշումները, օրենսդրության տարընթերցումները, տարաբնույթ մեկնաբանությունները առաջացնում են հարկային պարտավորությունների գնահատման անորոշություններ: Ներկայացված և վճարված հարկային պարտավորությունների ճշտությունը ենթակա է ստուգման հարկային մարմինների կողմից, որոնք խախտումների համար իրավասու են առաջադրել տույժեր, տուգանքներ: Հարկային պարտավորությունները չեն կարող փոփոխվել, եթե դրանք վերաբերում են երեք տարուց ավել վաղեմությանը:

Ղեկավարությունը որոշում է, թե արդյոք հարկավոր է դիտարկել յուրաքանչյուր հարկային անորոշությունն առանձին կամ մեկ և ավելի հարկային անորոշությունների հետ միասին՝ կախված

նրանից, թե որ մոտեցումն է թույլ տալիս լավագույնս կանխատեսել անորոշության լուծումը: Ղեկավարությունը ենթադրում է, որ հարկային մարմինը կստուգի այն գումարները, որոնք նա իրավունք ունի ստուգելու և այդ ստուգումները կատարելիս՝ կունենա համապատասխան տեղեկություններին վերաբերող ամբողջական տեղեկատվություն:

Ղեկավարությունը գտնում է, որ ճիշտ է ճանաչել հարկային պարտավորությունները: Այնուամենայնիվ, հարկային մարմինը կարող է ունենալ Հիմնադրամի կողմից հաշվարկված և ներկայացված հարկային պարտավորությունների վերաբերյալ այլ մեկնաբանություններ, որոնք կարող են ի հայտ գալ ստուգումների, ուսումնասիրությունների ընթացքում:

24.Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

2022թ. փետրվարի 24-ին սկսված ռուս-ուկրաինական ռազմական հակամարտության հետևանքով բազմաթիվ երկրներ, այդ թվում՝ ԵՄ-ն, Շվեյցարիան, Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ն, Կանադան, Ճապոնիան և Ավստրալիան, տնտեսական պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի (և որոշ դեպքերում Բելառուսի) նկատմամբ: Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Ռուսաստանի և Բելոռուսի հետ մեկ տնտեսական միությունում (Եվրասիական Տնտեսական Միություն) հնարավոր է հետևանքներ լինեն նաև Հայաստանի Հանրապետության նկատմամբ, ինչը զգալի ազդեցություն կարող է ունենալ Հայաստանի տնտեսության վրա:

Վերոնշյալ հանգամանքների տեղի ունենալը, ինչպես նաև ամբողջական ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա գնահատել հնարավոր չէ: Այնուամենայնիվ, ղեկավարությունը գտնում է, որ այս պահին, դեռևս էական ազդեցություն չկա Հիմնադրամի ֆինանսավորման, ինչպես նաև ընթացիկ գործունեության և ծրագրերի իրականացման վրա:

Ճշգրտող այլ դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել հաշվետու ամսաթվից (31.12.2021թ) հետո մինչև վավերացման ամսաթիվը (28.06.2022թ.) ընկած ժամանակահատվածում:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 23.08.2023 12:11